ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարս համայնք, 19-րդ փող., թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 սեպտեմբերի 2017 թվականի N 53-Ա

2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ «ՍՊԱՅԿԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 70-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Ալափարսի համայնքի ավագանու 2017 թվականի օգոստոսի 2-ի N 24-Ն որոշումը և Ալափարսի համայնքապետարանում 2017 թվականի սեպտեմբերի 20-ին անցկացված աճուրդի արձանագրությունները՝ ***որոշում եմ.***

1.«Սպայկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Ալափարսի համայնքի վարչական տարածքից օտարել 39.34106 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասեր 34097,1 հազար դրամ արժեքով՝ համաձայն հավելվածի:

2.«Սպայկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագրեր, որոնք ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2017 թ. սեպտեմբերի 28
գ.Ալափարս

Հավելված
Ալափարսի համայնքի ղեկավարի
2017 թվականի սեպտեմբերի 28-ի
N53-Ա որոշման

2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ԱԼԱՓԱՐՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ «ՍՊԱՅԿԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Լոտ	Ծածկագիրը	Մակերեսը (հեկտար)	Նպատակային նշանակությունը	Հողատեսքը	Վաճառքի գինը (հազ.դրամ)
1	2	3	4	5	6
1	07-008-0201-0137	6,26792	Գյուղատնտե-սական	4-րդ կարգի արոտավայր	799.2
2	07-008-0201-0145	0,9158	Գյուղատնտե-սական	Այլ հողատեսք	89.6
3	07-008-0201-0149	1.86684	Գյուղատնտե-սական	2-րդ կարգի ջրովի վարելահող	2134.1
4	07-008-0201-0150	3.00362	Գյուղատնտե-սական	2-րդ կարգի ջրովի վարելահող	3425.4
5	07-008-0201-0151	2.09947	Գյուղատնտե-սական	2-րդ կարգի ջրովի վարելահող	2396.3
6	07-008-0201-0152	2.00334	Գյուղատնտե-սական	2-րդ կարգի ջրովի վարելահող	2298.0
7	07-008-0201-0153	1.5154	Գյուղատնտե-սական	2-րդ կարգի ջրովի վարելահող	1758.0
8	07-008-0201-0154	2.25321	Գյուղատնտե-սական	2-րդ կարգի ջրովի վարելահող	2569.6
9	07-008-0201-0155	2.42049	Գյուղատնտե-սական	2-րդ կարգի ջրովի վարելահող	2758.1
10	07-008-0201-0156	0.77001	Գյուղատնտե-սական	2-րդ կարգի ջրովի վարելահող	907.9
11	07-008-0201-0158	1.56944	Գյուղատնտե-սական	4-րդ կարգի ջրովի վարելահող	978.5
12	07-008-0201-0159	2.19773	Գյուղատնտե-սական	4-րդ կարգի ջրովի վարելահող	1368.1

1	2	3	4	5	6
13	07-008-0201-0162	0.63257	Գյուղատնտե-սական	2-րդ կարգի ջրովի վարելահող	743.0
14	07-008-0201-0163	3.49222	Գյուղատնտե-սական	2-րդ կարգի ջրովի վարելահող	3986.1
15	07-008-0201-0164	1.1242	Գյուղատնտե-սական	Այլ հողատեսք	113.1
16	07-008-0201-0167	2.1967	Գյուղատնտե-սական	2-րդ կարգի ջրովի վարելահող	2505.9
17	07-008-0201-0168	1.73015	Գյուղատնտե-սական	2-րդ կարգի ջրովի վարելահող	2000,1
18	07-008-0201-0169	2,28165	Գյուղատնտե-սական	2-րդ կարգի ջրովի վարելահող	2601.6
19	07-008-0201-0189	1.0003	Գյուղատնտե-սական	4-րդ կարգի ջրովի վարելահող	664.5

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարս համայնք, 19-րդ փող., թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 սեպտեմբերի 2017 թվականի N 52-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1.2017 թվականի սեպտեմբերի 27-ին հրավիրել համայնքի ավագանու արտահերթ նիստ հետևյալ օրակարգով.

1)Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու մասին.

2)Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը մրցութային կարգով, վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.

3)Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին

4)Ալափարսի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 47-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

5)Ալափարսի համայնքի 2017 թվականի բյուջեի պահուստային ֆոնդից հատկացումներ կատարելու մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2017 թ. սեպտեմբերի 25
գ.Ալափարս